

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ  
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՆ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	4
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ՓՈԽԱՐԺԵՔ	6
4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	7
4.1. Բյուջեի եկամուտները	7
4.2. Բյուջեի ծախսերը	9
4.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	10
4.4. Պետական պարտք	10
5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	11
5.1. Գնաճ	11
5.2. Ավանդներ	12
5.3. Վարկեր	13
5.4. Դրամական փոխանցումներ	15
6. ԱՄՓՈՓՈՒՄ	16

# 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Ռուս-ուկրաինական զինված հակամարտության հետևանքով առաջացած արտաձին գործոնների ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա 2022թ. հետո աստիճանաբար թուլացել է, իսկ տնտեսական աճի տեմպերը գնալով դանդաղել են: 2022 թվականին տնտեսական աճը կազմել է 12.6%, 2023-ին՝ 8.3%, իսկ 2024 թվականն ամփոփվեց 2022-ի ցուցանիշին ավելի քան կրկնակի զիջող 5.9% տնտեսական աճով: Ընդ որում, 2024թ. սկզբին տնտեսական աճն ավելի բարձր է եղել՝ առաջին եռամսյակի 7.9%-ից չորրորդ եռամսյակում հասնելով ընդամենը 3.7%-ի, ինչը նույնպես արտացոլում էր արտաքին գործոնների դրական ազդեցությունների չեզոքացումը: Առաջին երկու եռամսյակների բարձր տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր ոսկու վերաարտահանման կտրուկ ավելացմամբ, որն աստիճանաբար նվազեց և ներկայումս գրեթե չեզոքացել է: **Առաջիկայում ակնկալվում են տնտեսական ակտիվության էապես ավելի ցածր տեմպեր, քան արձանագրվել է 2024-ին:** Բացի այդ, կգործի նաև այսպես կոչված բազայի էֆեկտը՝ 2025-ի ցուցանիշները կհամեմատվեն 2024-ի՝ ոսկու վերաարտահանման գործոնի հաշվին արձանագրված բավական բարձր ցուցանիշների հետ:

Վերոհիշյալ զարգացումները արտացոլվել են նաև 2025թ. տարեսկզբի ցուցանիշներում: Հունվար ամսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (SUՑ) կազմել է 7.1%: Այն նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշից ցածր է 4.3 տոկոսային կետով:


**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %**



2025թ. հունվարին SUՑ-ի աճին ամենամեծ նպաստումն ունեցել են առևտուրը և ծառայությունները՝ համապատասխանաբար 4.4 և 3.0 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության աճին 0.6 տոկոսային կետով նպաստել է նաև


շինարարության ոլորտը: Արդյունաբերության ծավալների նվազումը 2.1 տոկոսային կետով հակազդել է ՏԱՑ-ի աճին:

**Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2025թ. հունվարին, տոկոսային կետ**



**1.1. Արդյունաբերություն**

**Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %**




**Արդյունաբերության<sup>1</sup> ոլորտում երեք ամիս շարունակ անկում է արձանագրվում:** Արդյունաբերության ծավալը նախորդ տարվա հունվարի համեմատ 2025թ. հունվարին նվազել է 10.4%-ով՝ շարունակելով նախորդ տարվա վերջին երկու ամիսների միտումը: Իհարկե, այստեղ մեծ դեր ունի բազայի էֆեկտը, քանի որ արդյունաբերական արտադրանքի ծավալի 2025-ի հունվարի ցուցանիշը

<sup>1</sup> Արդյունաբերության հունվար ամսվա՝ ըստ ենթաօլորտների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

համեմատվում է 2024-ի հունվարի՝ կտրուկ աճ արձանագրած ցուցանիշի հետ (վերաարտահանվող ոսկու զգալի մասը ձևակերպվել է որպես հայկական ծագման արտադրանք և հանգեցրել ոլորտի ավելացված արժեքի աճի): Բացի բազայի էֆեկտից, լուրջ բացասական ազդեցություն ունի նաև այն հանգամանքը, որ ոսկու վերաարտահանման գործոնը (նաև այլ գործոններ) հանգեցրել են արդյունաբերության ոլորտի որոշակի «դեֆորմացիայի»: Այնուամենայնիվ, քանի որ հունվար ամսվա արդյունաբերության՝ ըստ ենթաոլորտների տվյալները դեռևս չեն հրապարակվել, այս հանգամանքի մասին առավել առարկայական եզրահանգումներ հնարավոր չէ կատարել:

## 1.2. Շինարարություն

**Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %**




### Շինարարության ոլորտում աճի տեմպը բարձր է:

2025թ. հունվարին շինարարության աճը կազմել է 11.6%, որը շուրջ 2.1 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա հունվարի աճից:

### 1.3. Ծառայություններ


Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների<sup>2</sup> ոլորտի աճի տեմպը նախորդ տարվա սկզբի համեմատ զգալիորեն արագացել է: Ծառայությունների ոլորտում 2025թ. հունվարին գրանցվել է 12.6% աճ, որը նախորդ տարվա հունվարի ցուցանիշից ավելի է 5.3 տոկոսային կետով: Ծառայությունների աճի բարձր տեմպի մասին առավել հստակ դատողություններ հնարավոր է անել ոլորտի ենթաօլորտների տվյալների հրապարակումից հետո:

### 1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




<sup>2</sup> Ծառայությունների ոլորտի հունվար ամսվա՝ ըստ ենթաօլորտների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

**Առևտրի աճի տեմպը զգալիորեն դանդաղել է:** Առևտրի ոլորտում աճը գնալով դանդաղում է և 2025-ի հունվարին կազմել է 9.9%: **Դա 2022թ. մայիսից ի վեր գրանցված ամենացածր ցուցանիշն է:** Ի դեպ, նախորդ տարվա հունվարի ցուցանիշը 19.3% էր: Առևտրի աճի տեմպի դանդաղումը նույնպես պայմանավորված է եղել վերաարտահանման նվազմամբ, քանի որ վերջինս որոշակիորեն արտացոլվում է նաև առևտրի ցուցանիշներում:

## 2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ<sup>3</sup>


**Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %**



**Արտահանման անկումը խորացել է:** 2025թ. հունվարին արտահանումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 49.2%-ով: Արտահանման ծավալների անկումը, ինչպես և արդյունաբերության դեպքում, պայմանավորված է նաև նախորդ տարվա բարձր բազայի առկայությամբ:

<sup>3</sup> Արտաքին առևտրի հունվար ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


**Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %**





**Ներմուծման ծավալը շարունակում է զգալիորեն նվազել:** 2025թ. հունվարին ներմուծումը նվազել է 33.5%-ով՝ նույնպես պայմանավորված ոսկու վերաարտահանման նախորդ տարվա համեմատ ավելի փոքր ծավալներով: Սակայն այն առավել մանրամասն հնարավոր կլինի վերլուծել արտաքին առևտրի կառուցվածքի հրապարակումից հետո (որն արտացոլված կլինի հաջորդ ամսվա տեղեկանքում):

**3. ՓՈՒՍԱՐԺԵՔ**

**Գծապատկեր 9. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%), աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)**







**2025թ. հունվարին ՀՀ դրամը թե՛ ԱՄՆ դոլարի, թե՛ եվրոյի և թե՛ ՌԴ ռուբլու նկատմամբ եղել է արժևորված:** ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամը նախորդ տարվա հունվարի համեմատ արժևորվել է 1.8%-ով՝ հունվարին դոլար/դրամ միջին փոխարժեքը կազմել է 398 դրամ: Եվրոյի նկատմամբ արժևորումը կազմել է 7.2%: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը կրկին արագացել է և 2025 թվականի հունվարին կազմել 15.8%:

## 4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ<sup>4</sup>

### 4.1. Բյուջեի եկամուտները


**Հունվարին արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների բավական բարձր աճ:** Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2025թ. հունվարին աճել են 29.4%-ով այն դեպքում, երբ նախորդ տարվա հունվարին եկամուտների աճը կազմել էր ընդամենը 0.8%:

<sup>4</sup> ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների վերլուծությունն իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող տվյալների հիման վրա: Ընդ որում, սկսած 2024թ. հունիսից, 2023-ի և նախորդ տարիների ցուցանիշները հրապարակվում են հիպոթեթային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձները ընդհանուր ցուցանիշներում ներառված, ինչի հետևանքով սույն տեղեկանքում պետական բյուջեի ցուցանիշների աճերը տարբերվում են նախորդ ամիսներին հրապարակված տեղեկանքների ցուցանիշներից:

Բյուջեի եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է եղել հարկային եկամուտների 31.1% աճով, որին զգալիորեն նպաստել է հավաքագրվող հարկատեսակներից ԱԱՀ-ի ծավալների կտրուկ ավելացումը: Վերջինս մեծապես պայմանավորված է բազայի էֆեկտի առկայությամբ: Մասնավորապես, նախորդ տարվա հունվարին ԱԱՀ-ի աճը կազմել էր -7.1%, որն էլ իր հերթին պայմանավորված էր այդ ամսվա հարկերի որոշ մասը 2023թ. դեկտեմբերին վճարելու հանգամանքի հետ: Դրա մասին է խոսում նաև այն, որ 2024-ի հունվարի եկամուտները 36.3%-ով պակաս են եղել, քան 2023-ի դեկտեմբերինը (սովորաբար հունվարի ցուցանիշը 20-25 տոկոսով է պակաս լինում դեկտեմբերի ցուցանիշից): Արդյունքում, բազայի էֆեկտի հաշվին 2025-ի հունվարի ցուցանիշը 2024-ի հունվարի համեմատ սովորականից ավելի մեծ աճ է ունեցել: **Այդուհանդերձ, միայն մեկ ամսվա ցուցանիշները չեն կարող բավարար լինել տարվա մասին կանխատեսում կատարելու համար:**

Ոչ հարկային եկամուտները նվազել են 23.7%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերի աճի տեմպը կազմել է 2.8 անգամ, սակայն հարկ է նկատի ունենալ, որ խոսքը բացարձակ մեծությամբ ընդամենը 0.5 մլրդ դրամով աճի մասին է:

**Գծապատկեր 10. Հարկային եկամուտների կուտակային աճը<sup>5</sup>, %**



2025թ. հունվարին հարկային եկամուտների աճն առավելապես պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 46.0%), եկամտահարկի (աճը՝ 36.0%) և շահութահարկի (աճը՝ 72.7%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 15.4, 9.5 և 4.3 տոկոսային կետ: Բնապահպանական և բնօգտագործման վճարները հարկային եկամուտների աճին նպաստել են շուրջ 0.7 տոկոսային կետով: Ակցիզային հարկի գծով մուտքերի 17.3%-ով նվազումը 1.9 տոկոսային կետով հակազդել է հարկային եկամուտների աճին: Այս

<sup>5</sup> Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:


հարկատեսակի գծով մուտքերի նվազման հավանական պատճառը ներմուծման, ինչպես նաև ենթակազմային ապրանքատեսակների կրճատումն է:

**Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների**

	2024թ. հունվար		2025թ. հունվար	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
<b>Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք</b>	0.3	0.3	31.1	31.1
Ավելացված արժեքի հարկ	-7.1	-2.6	46.0	15.4
Ակցիզային հարկ	22.6	2.1	-17.3	-1.9
Շահութահարկ	79.5	2.6	72.7	4.3
Պետական տուրք	22.1	0.4	22.4	0.5
Մաքսատուրք	12.6	0.4	13.6	0.4
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-717.5	1.5	56.9	0.7
Այլ հարկեր	3.5	0.1	1.6	0.1
Շրջանառության հարկ	13.2	0.9	19.4	1.4
Եկամտային հարկ	-19.1	-6.3	36.0	9.5
Սոցիալական վճարումներ	27.2	1.2	12.1	0.7

**4.2. Բյուջեի ծախսերը**


**Գծապատկեր 11. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ**



**Պետական բյուջեի ծախսերը՝ հատկապես կապիտալ ծախսերը, աճել են բավական բարձր տեմպով:** Ընդհանուր ծախսերը 2025թ. հունվարին կազմել են 138.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա հունվարի համեմատ աճելով 19.7%-ով: Ընդ որում, աճը 11.7 տոկոսային կետով պայմանավորված է կապիտալ ծախսերի շուրջ 3.7 անգամ աճով: Դրանք աճել են 13.5 մլրդ դրամով և կազմել 18.6 մլրդ դրամ:

### 4.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

**Գծապատկեր 12. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ**



**Ինչպես և նախորդ մի քանի տարիներին, բյուջետային տարին սկսվել է հավելուրդով:** Քանի որ 2025թ. հունվարին ՀՀ պետական բյուջեի եկամուտները գերազանցել են ծախսերին, բյուջեն ունեցել է հավելուրդ՝ շուրջ 100.0 մլրդ դրամի չափով:


### 4.4. Պետական պարտք

**2025թ. հունվարի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ մեկ տարի առաջվա համեմատ աճել է 8.2%-ով՝ հասնելով 12.9 մլրդ ԱՄՆ դոլարի:** Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքն աճել է 8.9%-ով՝ կազմելով 12.4 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում, կառավարության պարտքի բաղադրիչներից ներքին պարտքը (դրամական արտահայտությամբ) աճել է 16.5%-ով, իսկ արտաքին պարտքը (դոլարային արտահայտությամբ)՝ 0.2%-ով: Արտաքին պարտքի ծավալը 2024թ. դեկտեմբերի վերջի համեմատ փոքր-ինչ նվազել է:

**Պետական պարտատոմսերի տոկոսադրույքները նախորդ տարվա հունվարի համեմատ բավական ցածր են:** Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2025թ. հունվարին կազմել է 8.6%: Դա 2024թ. դեկտեմբերի ցուցանիշից ցածր է 0.1, իսկ նախորդ տարվա հունվարի ցուցանիշից՝ 2.0 տոկոսային կետով: Երկարաժամկետ

պարտատոմսերի եկամտաբերությունը մեկ տարվա ընթացքում նվազել է 1.0 տոկոսային կետով և 2025թ. հունվարին կազմել 10.0%:


**Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %**



## 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 5.1. Գնաճ

**Գծապատկեր 14. 12-ամսյա գնաճ, %**




**Գնաճն արագանում է, սակայն շարունակում է ցածր լինել ԿԲ թիրախային ցուցանիշից:** Մի քանի ամիս շարունակ գնաճը գտնվում է դրական տիրույթում, սակայն դեռևս բավական ցածր է: 2025թ. հունվարին նախորդ տարվա հունվարի համեմատ գնաճը կազմել է 1.7%: Կենտրոնական բանկը դեռևս 2023թ. հունիսից, արձագանքելով գնաճային միջավայրի փոփոխություններին, աստիճանաբար (ընդհանուր առմամբ՝ 4 տոկոսային կետով) նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը: Վերջին նվազեցումը կատարվել է 2025թ.

փետրվարին: Ի դեպ, 2025թ. սկզբից ՀՀ կենտրոնական բանկի համար գնաճի թիրախային ցուցանիշը կազմում է 3±1%՝ նախորդ տարիներին (2006 թվականից) գործող 4±1.5%-ի համեմատ:


## 5.2. Ավանդներ

Գծապատկեր 15. Ավանդների 12-ամսյա աճը, %



**Ավանդները շարունակում են աճել:** Ավանդների ընդհանուր ծավալը 2025թ. հունվարին նախորդ տարվա հունվարի համեմատ աճել է 14.2%-ով: Նախորդ ամսվա համեմատ աճը 0.3% է: Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ավանդների ծավալի աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 14.5% և 13.1%:

Գծապատկեր 16. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2025թ. հունվարին առավելապես՝ 5.7 տոկոսային կետով, նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը: Չգալի են եղել նաև ձեռնարկությունների և ոչ ռեզիդենտների ավանդների նպաստումները՝ համապատասխանաբար 3.8 և 3.0 տոկոսային կետ:

### 5.3. Վարկեր


**Վարկերի աճի տեմպը շարունակում է արագանալ:** ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2025թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշին գերազանցում է 26.2%-ով:

**Գծապատկեր 17. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %**




Աճը պայմանավորված է ռեզիդենտներին տրամադրված վարկերով, որոնք աճել են 28.2%-ով և վարկերի ընդհանուր ծավալի աճին նպաստել 26.7 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալը 2025թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 9.1%-ով և վարկերի ընդհանուր ծավալի աճին հակազդել 0.5 տոկոսային կետով:

**Գծապատկեր 18. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %**



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի թվում աճել են թե՛ իրավաբանական անձանց և թե՛ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը: Դրանց նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալի աճին կազմել են համապատասխանաբար 13.6 և 14.6 տոկոսային կետ:

**Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ<sup>6</sup>**



Հունվարին վարկերի աճին զգալի նպաստում են ունեցել հիպոթեքային (աճը՝ 36.2%) և սպառողական (աճը՝ 31.0%) վարկերի աճերը: Դրանք ընդհանուր վարկերի


<sup>6</sup> Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:



աճին նպաստել են համապատասխանաբար 7.8 և 6.8 տոկոսային կետով: Տնտեսության բոլոր ճյուղերում տրամադրված վարկերի ծավալներն աճել են: Ընդ որում, հանքարդյունաբերության ոլորտում վարկերի ծավալը 2025թ. հունվարին ավելի քան 2.2 անգամ կամ շուրջ 71.0 մլրդ դրամով ավելի է, քան նախորդ տարվա հունվարին:

#### 5.4. Դրամական փոխանցումներ

**Գծապատկեր 20. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար<sup>7</sup>**



**Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) 2024թ. դեկտեմբերին կտրուկ աճել է, սակայն 2024-ի տարեկան ներհոսքը, միևնույն է, զիջում է 2023-ի ցուցանիշը: 2024թ. դեկտեմբերին կտրուկ աճել են դրամական միջոցների թե՛ ներհոսքը, թե՛ արտահոսքը և թե՛ զուտ ներհոսքը՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ համապատասխանաբար 80.6%-ով, 50.0%-ով և 2.4 անգամ: Ընդ որում, այսպիսի փոփոխությունն առավելապես պայմանավորված է առևտրային հոսքերի (և ոչ թե մասնավոր տրանսֆերտների) աճով: Ավելին, ոչ առևտրային զուտ ներհոսքը դեկտեմբերին նույնիսկ մի փոքր՝ 1.1%-ով, նվազել է:**

2024թ. հունվար-դեկտեմբերի դրամական փոխանցումների զուտ ներհոսքը՝ 1.5 մլրդ ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին զիջում է շուրջ 8.8%-ով: Զուտ ներհոսքի կրճատումը պայմանավորված է եղել արտահոսքի շուրջ 7.1% աճով: **Ոչ առևտրային զուտ ներհոսքը 2024-ի հունվար-**

<sup>7</sup> Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2025թ. հունվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

դեկտեմբերին 2023-ի նույն ժամանակահատվածի ցուցանիշից պակաս է 34.8%-ով:

## 6. ԱՄՓՈՓՈՒՄ

1. ՀՀ տնտեսության վրա ռուս-ուկրաինական զինված հակամարտության հետևանքով առաջացած արտաժին գործոնների դրական ազդեցությունները 2022թ. հետո աստիճանաբար թուլացել են, ինչի արդյունքում տնտեսական աճի տեմպն աստիճանաբար դանդաղել է: 2025թ. առաջին ամսվա տնտեսական աճի ցուցանիշը ևս կրել է այդ ազդեցությունը և կազմել 7.1%՝ 4.3 տոկոսային կետով ցածր լինելով նախորդ տարվա հունվարի աճից:

2. Արձանագրվել են խոշոր բացասական ցուցանիշներ արդյունաբերության և արտաքին առևտրի ծավալների գծով: Ինչպես արտահանման, այնպես էլ արդյունաբերության ծավալներն էականորեն նվազել են, ինչը հիմնականում պայմանավորված է ոսկերչական գործունեության (ոսկու վերաարտահանման) ծավալների էական նվազմամբ: Իրականում արտահանման, ինչպես նաև արդյունաբերության ծավալների նվազումը սկսել էր դեռևս նախորդ տարվա կեսերից: Սակայն խոշոր բացասական ցուցանիշները սկսում են արձանագրվել, երբ ցուցանիշները համեմատվում են նախորդ տարվա տվյալ ժամանակահատվածներում արձանագրված բարձր ցուցանիշների հետ: Արդյունքում այս տարվա առաջին ամիսներին ինչպես արդյունաբերության, այնպես էլ արտահանման և ներմուծման աճի ցուցանիշները կլինեն բացասական:

3. Պետական բյուջեի եկամուտների աճը 2025-ի հունվարին բավական բարձր է եղել՝ կազմելով 29.4%, այն դեպքում, երբ 2024-ի նույն ամսվա ցուցանիշն ընդամենը 0.8% էր: Բարձր աճը հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա հունվարին բյուջեի եկամուտների աճի տեմպը կտրուկ դանդաղել էր: Հետևաբար, եկամուտների աճի բարձր տեմպը հետագա ամիսներին չի պահպանվի, քանի որ ցածր բազայի առկայությունը հատուկ է եղել միայն նախորդ տարվա սկզբին:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**